— Որքան անգամ այդ տուփը ձեռքս առնելու լինեմ, ձեր անունը օրինութեամբ կը յիշոի իմ բերանում, պարոն բժշկապետ:

Ասլանը այլեւս երկար չնստեց, երբ քարտուղարը պատրաստած թուղթը ներս բերեց: Սրբազանը կնիքը դրեց եւ ստորագրեց թուղթը, յետոյ իր ձեռքով տոեց Ասլանին: Նա շնորհակալութեամբ ընդունեց թուղթը եւ, «տիրուհին» առնելով, վեր կացաւ: Երբ սրբազանի աջը սեղմելով կամենում էր հեռանալ, նա կանգնեցրեց, ասելով.

— Կիրակի գիշեր ինձ մօտ հիւրեր կը լինեն, որոնց թւում կը լինի փաշան եւ մեր քաղաքի մի քանի նշանաւոր անձինք: Խնդրեմ, դուք եւս յարգէք մեր սեղանը:

— Մեծ ուրախութեամբ, — ասաց Ասլանը, եւ մենք դուրս եկանք:

Բակի դռան մօտ տեսանք քարտուղարին, որ դարան մտած կատոի պէս սպասում էր մեզ:

— Դրան պէտք է մի բան տալ, — ասեցի Ասլանին:

— Գիտեմ, — ասաց նա եւ, կանչելով քարտուղարին, դրեց նրա ափի մէջ մի հատ ոսկի:

Քարտուղարը, ի նշան իր շնորհակալութեան, բռնեց Ասլանի ձիու ասպանդակը, որ նա հեծնէ: Ասլանը մերժեց այդ ցած ծառայութիւնը, որ վայել չէր նրա աստիճանին:

Ճանապարհին ես ասեցի Ասլանին.

Բաւական քաղաքավարի մարդ երեւաց ինձ սրբազանը:

— Եւ յիմար մարդ չէ:

Ը. ՆԱՒԱՀԱՆԳՍՏԻ ԴՈՒՌԸ

Առաջնորդարանից դուրս գալուց յետոյ մենք այլեւս չվերադարձանք Այգեստան, որովհետեւ Ասլանը կամենում էր Աւանց գիւղը գնալ, ծովային աղերի պատրաստութիւնը տեսնելու համար: Նա ինձ ասաց, որ ճանապարհը գիտէ եւ առաջնորդի ամենեւին կարօտութիւն չկայ:

Մինչեւ կէս օր դեռ բաւական ժամանակ կար: Մենք դուրս եկանք Իսքալե-կափուսի կոչուած քաղաքադռնից, որ տանում է դէպի նաւահանգիստը: Այդ պատճառով եւս նա կոչւում է Իսքալե-կափուսի, որ նշանակում է նաւահանգստի դուռ: Այստեղից մինչեւ Աւանց գիւղը, որի մօտ գտնւում է եւ նաւահանգիստը, կէս ժամու ճանապարհ է, բայց մենք զանազան հետազօ-